ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Էդգար Արամի Հովհաննիսյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ստուգումների իրականացման ոլորտի վերահսկողության վարչությունում (այսուհետ՝ Վարչություն) որպես փորձագետ աշխատելու ժամանակահատվածում (24.03.25թ.-19.08.25թ.) իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Իրականացրել եմ վերահսկվող օբյեկտի գործունեության և վերջինիս կողմից պետական միջոցների կառավարման օրինականության և արդյունավետության վերահսկողության նպատակով ուսումնասիրություն:
2. Վարչության լիազորությունների շրջանակում առանձին հարցերի պարզաբանման նպատակով, այդ թվում առանձին վերահսկվող օբյեկտների մասով իրականացրել եմ վերլուծություն՝ առցանց ստացվող դիմումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ եղանակների օգնությամբ հավաքագրվող տեղեկությունների հիման վրա առկա իրողությունները պարզելու և դրանց համապատասխան գնահատական տալու նպատակով՝ Վարչության պետին ներկայացնելով առաջարկություններ, տեղեկանքներ, զեկույցներ:
3. Վարչության պետի հանձնարարությամբ պատրաստել եմ գրություններ և ուղարկել պետական կառավարման մարմիններին և քաղաքացիներին: Իրականացրել եմ վերահսկողության արդյունքներով արձանագրված խախտումների, խնդիրների , դրանց պատճառների, հանգամանքների ու հետևանքների վերլուծություն, դրանց վերաբերյալ Վարչության պետին ներկայացնելով առաջարկություններ, տեղեկանքներ, զեկույցներ:
4. Վարչության պետի հանձնարարությամբ Վարչության առջև դրված աշխատանքների կազմակերպման, վերահսկման կամ համակարգման գործընթացում սահմանված ժամկետներում իրականացրել եմ Վարչության գործառույթներին առնչվող այլ աշխատանքներ:
5. Վարչության պետին ներկայացրել եմ Վարչության առջև դրված նպատակների և գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության նախագծեր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության
ստուգումների իրականացման ոլորտի
վերահսկողության վարչության փորձագետ՝ **Էդգար Արամի Հովհաննիսյան**

19.08.2025թ.